



ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 հուլիսի 2020 թվականի
Թիվ 306-Ա

**«ԱԼԵՔՍ ՀՈԼԴԻՆԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի ԹԻՎ 14-Ա ՈՐՈՇՄԱՄԲ
ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ
ՄԱՍՈՎ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 2020 թվականի հուլիսի 31-ի դռնբաց նիստում քննարկեց «Ալեքս հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին հարցը:

Քննարկման արդյունքում Հանձնաժողովն ամրագրեց հետևյալը:

1. Վարչական վարույթի հարուցման նախադրյալների և պահանջված տեղեկատվության վերաբերյալ.

Հանձնաժողովը 2019 թվականի մայիսի 31-ի՝ ««Շաքարավազ» ապրանքային շուկայի ուսումնասիրություն իրականացնելու մասին» թիվ 64-Ա որոշման (այսուհետ՝ Թիվ 64-Ա որոշում) հիման վրա իրականացրել է ուսումնասիրություն «Շաքարավազ» ապրանքային շուկայում (այսուհետ՝ Ուսումնասիրություն), ինչի արդյունքների հիման վրա 2019 թվականի դեկտեմբերի 30-ին ընդունվել է ««Շաքարավազ» ապրանքային շուկայի ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ» թիվ 225-Ա որոշումը:

Ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ շաքարավազի մանրածախ և մեծածախ իրացման ոլորտներում՝ մի շարք տնտեսվարող սուբյեկտների կողմից վարվող գնային քաղաքականությունը, ինչպես նաև ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա ազդեցությունը կարող է պարունակել «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) հնարավոր խախտումների, մասնավորապես՝ տնտեսվարող սուբյեկտների կողմից գերիշխող դիրքի հնարավոր չարաշահման և (կամ) հակամրցակցային համաձայնության (չհիմնավորված կամ խտրական գների սահմանման և կիրառման, գների չհիմնավորված փոփոխությունների կամ պահպանման և այլն) հատկանիշներ:

Վերոնշյալը հաշվի առնելով՝ Հանձնաժողովի՝ «Մի շարք տնտեսվարող սուբյեկտների կողմից «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի հնարավոր

խախտումների վերաբերյալ վարչական վարույթ հարուցելու մասին» թիվ 14-Ա որոշմամբ հարուցվել է վարչական վարույթ (այսուհետ նաև՝ Վարչական վարույթ):

Վարչական վարույթի շրջանակներում Հանձնաժողովը դիմել է «Ալեքս Հոլդինգ», «Ալեքս էնդ Հոլդինգ», «Արմեն-Համիկ Եղբայրներ Հ/Ձ», «Սիթի», «Նոր Ջովք», «Էվրիկա Գրուպ», «Մաջիդ Ալ Ֆութաիմ հայփերմարքեթս էյ-էմ», «Սաս-Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին՝ վերջիններիս կողմից 2018 և 2019 թվականներին, ինչպես նաև 2020 թվականի հունվարից մինչև մարտ ամիսը ներառյալ շաքարավազի ձեռքբերման և իրացման ոլորտներում իրականացված գործունեության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

Միաժամանակ Հանձնաժողովը դիմել է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե (այսուհետ նաև՝ ՀՀ ՊԵԿ) 2018 թվականի հունվարից մինչև 2020 թվականի մարտ ամիսն ընկած ժամանակահատվածում ԱՏԳ ԱԱ-ի 1701 ապրանքային խմբին դասվող ապրանքների ներմուծումների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

Վարչական վարույթի շրջանակներում Հանձնաժողովը գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման նպատակով 2020 թվականի ապրիլի 3-ի թիվ ԳԳ-1072, ԳԳ-1073, ԳԳ-1074, ԳԳ-1075, ԳԳ-1076, ԳԳ-1077, ԳԳ-1078, ԳԳ-1079 գրություններով դիմել է համապատասխանաբար՝ «Ալեքս Հոլդինգ», «Արմեն-Համիկ Եղբայրներ Հ/Ձ», «Ալեքս էնդ Հոլդինգ», «Սաս-Գրուպ», «Նոր Ջովք», «Սիթի», «Էվրիկա Գրուպ», «Մաջիդ Ալ Ֆութաիմ հայփերմարքեթս էյ-էմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին՝ խնդրելով գրությունները ստանալուն հաջորդող օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն 2020 թվականի փետրվարի 1-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում շաքարավազի շրջանառության ոլորտում իրենց կողմից իրականացված գործունեության վերաբերյալ:

«Ալեքս Հոլդինգ», «Ալեքս էնդ Հոլդինգ», «Սիթի» և «Էվրիկա Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները Հանձնաժողով են ներկայացրել գրություններ՝ խնդրելով պահանջված տեղեկատվությունը ներկայացնելու համար տրամադրել լրացուցիչ ժամկետ: Վերոնշյալ ընկերությունները պահանջված տեղեկատվությունը Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետում ներկայացնելու անհնարինությունը առավելապես պայմանավորել են Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշմամբ հայտարարված արտակարգ դրությամբ, դրա հետևանքով արտակարգ ռեժիմով աշխատելու և գերծանրաբեռնված լինելու հանգամանքներով:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ Հանձնաժողովն ամրագրել է, որ «Ալեքս Հոլդինգ», «Ալեքս էնդ Հոլդինգ», «Սիթի» և «Էվրիկա Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից հնարավոր չի եղել Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետում ներկայացնել սույն գործի լուծման համար էական համարվող տեղեկատվությունը, որի պայմաններում անհնար է Վարչական վարույթի իրականացումը, ուստի, հաշվի առնելով Վարչական վարույթի իրականացման անհնարինությունը և հիմք ընդունելով Օրենքի 30-րդ հոդվածի 11-րդ մասը՝ Հանձնաժողովը 2020 թվականի ապրիլի 15-ին ընդունել է «Մի շարք տնտեսվարող սուբյեկտների կոմից «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի հնարավոր խախտումների վերաբերյալ վարչական վարույթ հարուցելու մասին» թիվ 14-Ա որոշմամբ հարուցված վարչական վարույթի իրականացման ժամկետի ընթացքը կասեցնելու մասին» թիվ 129-Ա որոշումը:

«Ալեքս Հոլդինգ», «Ալեքս էնդ Հոլդինգ», «Սիթի» և «Էվրիկա Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից Հանձնաժողովի գրություններով պահանջված տեղեկատվությունը Հանձնաժողով ներկայացվելուց հետո, Հանձնաժողովն

արձանագրել է, որ վերացել են Վարչական վարույթի կասեցման համար հիմք հանդիսացած հանգամանքները, ուստի 2020 թվականի հուլիսի 20-ին ընդունել է «Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի՝ 2020 թվականի հունվարի 31-ի «Մի շարք տնտեսվարող սուբյեկտների կողմից «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի հնարավոր խախտումների վերաբերյալ վարչական վարույթ հարուցելու մասին» թիվ 14-Ա որոշմամբ հարուցված վարչական վարույթը վերսկսելու մասին» թիվ 287-Ա որոշումը:

2. Ապրանքային շուկայի վերաբերյալ.

Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքային շուկան Հանձնաժողովի որոշմամբ սահմանված՝ որոշակի տարածքում տվյալ ապրանքի և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների շրջանառության ոլորտն է, որի սահմանները որոշվում են գնորդի կողմից համապատասխան տարածքում ապրանքի ձեռքբերման տնտեսական կամ այլ հնարավորություններով և նպատակահարմարությամբ և դրա սահմաններից դուրս այդպիսի հնարավորությունների և նպատակահարմարության բացակայությամբ: Ապրանքային շուկան բնութագրվում է ապրանքատեսակային ու աշխարհագրական սահմաններով, դրա սուբյեկտների կազմով և ծավալով:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև Վարչական վարույթի շրջանակներում դիտարկված հարցերը, կարգավորող դաշտի վերլուծությունը, ձեռք բերված տեղեկատվության և այլ նյութերի ուսումնասիրությունը և համադրությունը՝ Վարչական վարույթի շրջանակներում Հանձնաժողովը դիտարկել է «Շաքարավազ» ապրանքային շուկան (այսուհետ՝ Ապրանքային շուկա):

Ապրանքային շուկայի բնութագրիչները ճանաչելու համար Հանձնաժողովը.

ա) որոշել է Ապրանքային շուկայի ուսումնասիրության ժամանակային ինտերվալը,

բ) որոշել է Ապրանքային շուկայում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների կազմը,

գ) հաշվարկել է Ապրանքային շուկայի ծավալը և Ապրանքային շուկայում տնտեսավարող սուբյեկտների մասնաբաժինները,

դ) գնահատել է Ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վարչական վարույթը հարուցվել է Ուսումնասիրության արդյունքների հիման վրա, ուստի Ապրանքային շուկայի ուսումնասիրության ժամանակային ինտերվալը ներառում է 2018 և 2019 թվականները, ինչպես նաև 2020 թվականի հունվար ամսից մինչև մարտ ամիսը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Հանձնաժողովը 2005 թվականի հունիսի 1-ին ընդունել է ««Շաքարավազ» ապրանքային շուկայի ուսումնասիրության արդյունքների մասին» թիվ 47-Ա որոշումը, որով ճանաչվել են Ապրանքային շուկայի ապրանքատեսակային և աշխարհագրական սահմանները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շաքարը և շաքարավազը կարող են համեմատվել ըստ իրենց գործածության նշանակության, կիրառման, որակական, տեխնիկական, գնային և այլ հատկանիշներով, այնպես որ ձեռքբերողը փոխարինում կամ կարող է փոխարինել այդ ապրանքները մեկը մյուսով, ինչպես նաև այդ ապրանքատեսակները պատկանում են արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (ԱՏԳԱԱ) նույն՝ 1701 խմբին, ուստի Ապրանքային շուկայի ապրանքատեսակային սահմանը ներառում է շաքարի ու շաքարավազի բոլոր տեսակները:

Քանի որ նշված ապրանքատեսակները հավասարապես մատչելի են (տնտեսապես նպատակահարմար և հնարավոր է ձեռք բերել) Հայաստանի Հանրապետության ողջ

տարածքում, բացի այդ ապրանքի՝ ՀՀ տարածքում տեղափոխման ընթացքում դրա՝ գործածության նշանակության, կիրառման, որակական, տեխնիկական հատկանիշների փոփոխություններ տեղի չեն ունենում, ուստի ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանը Հայաստանի Հանրապետության տարածքն է:

Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ ապրանքային շուկայի ծավալը ապրանքային շուկայի աշխարհագրական սահմանում տվյալ ապրանքի և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների իրացման կամ ձեռքբերման ընդհանուր ծավալն է բնեղեն և (կամ) արժեքային արտահայտությամբ:

Ապրանքային շուկայի ծավալը, որպես կանոն, որոշվում է բնեղեն արտահայտությամբ, եթե շուկայի ապրանքատեսակային սահմանում տվյալ ապրանքի և դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների իրացման (ձեռքբերման) ընդհանուր ծավալը հնարավոր է հաշվարկել չափման միևնույն միավորի (օրինակ՝ կիլոգրամ, հատ, մետր և այլն) միջոցով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի և Ապրանքային շուկայում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը, հաշվարկել է Ապրանքային շուկայի ներմուծման, արտադրության և իրացման ընդհանուր ծավալները բնեղեն արտահայտությամբ, մասնավորապես՝ վերոնշյալ տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ 2018 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածք է ներմուծվել ----- կգ շաքարավազ ----- տնտեսվարող սուբյեկտի կողմից, իսկ 2019 թվականի ընթացքում ----- կգ՝ ----- տնտեսվարող սուբյեկտի կողմից: 2020 թվականի հունվարից մինչև մարտ ամիսը ներառյալ ՀՀ տարածք է ներմուծվել շուրջ ----- կգ շաքարավազ՝ ----- տնտեսվարողի կողմից:

Վերոնշյալ ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում շաքարավազի արտադրությամբ զբաղվել է 1 տնտեսվարող սուբյեկտ, որի կողմից 2018 թվականի ընթացքում արտադրվել է ----- կգ շաքարավազ, 2019 թվականին՝ ----- կգ, իսկ 2020 թվականի հունվար ամսից մինչև մարտ ամիսը ներառյալ -----:

Միաժամանակ, Հանձնաժողովի կողմից հաշվարկվել է Ապրանքային շուկայի իրացման ծավալը բնեղեն արտահայտությամբ, որը 2018 թվականին կազմել է ----- կգ, 2019 թվականին՝ --- կգ, իսկ 2020 թվականի հունվար-մարտ ժամանակահատվածում՝ ----- կգ: Ստացվում է, որ 2018 թվականի հունվարից մինչև 2020 թվականի մարտն ընկած ժամանակահատվածում Ապրանքային շուկայի իրացման ծավալը բնեղեն արտահայտությամբ կազմել է ----- կգ:

Ապրանքային շուկայում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների կազմում ընդգրկվում են այն տնտեսվարող սուբյեկտները, որոնք դրա սահմաններում իրացնում են ապրանքը՝ ապրանքային շուկայի ուսումնասիրության որոշակի ժամանակային ինտերվալի սահմաններում: Ըստ այդմ՝ 2018 թվականին Հայաստանի Հանրապետության տարածքում մեծածախ շրջանառության ոլորտում շաքարավազ իրացրել է թվով ---, իսկ 2019 թվականին՝ --- տնտեսվարող սուբյեկտ:

Բացի այդ Հանձնաժողովը Ապրանքային շուկայի մրցակցային միջավայրի վերաբերյալ ամբողջական պատկեր ստանալու նպատակով դեռևս Թիվ 64-Ա որոշման հիման վրա իրականացված «Շաքարավազ» ապրանքային շուկայի ուսումնասիրության շրջանակներում՝ գնահատել է շուկայի կենտրոնացվածության աստիճանը՝ հաշվարկելով առավել լայն տարածում ունեցող ինդեքսները (CR3, Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքս), որի արդյունքում եզրահանգել է, որ դիտարկվող ժամանակահատվածում շաքարավազի շուկան՝ ըստ իրացման ունեցել է բարձր կենտրոնացվածություն:

2.1 Ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող փնտրվարող սուբյեկտների վերաբերյալ.

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տնտեսվարող սուբյեկտն ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե որպես իրացնող կամ ձեռք բերող իրացման կամ ձեռքբերման ծավալներով գրավում է տվյալ շուկայի առնվազն մեկ երրորդը կամ ապրանքային շուկայում իրացման կամ ձեռքբերման առավել մեծ ծավալներ ունեցող երկու տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք, որպես իրացնող կամ ձեռք բերող, իրացման կամ ձեռքբերման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն մեկ երկրորդը կամ ապրանքային շուկայում իրացման կամ ձեռքբերման առավել մեծ ծավալներ ունեցող երեք տնտեսվարող սուբյեկտներից յուրաքանչյուրը տվյալ ապրանքային շուկայում համարվում է գերիշխող դիրք ունեցող, եթե նրանք, որպես իրացնող կամ ձեռք բերող, իրացման կամ ձեռքբերման ծավալներով միասին գրավում են տվյալ շուկայի առնվազն երկու երրորդը:

Ընդ որում, Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերոնշյալ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով տնտեսվարող սուբյեկտ(ներ)ը չի (չեն) կարող համարվել գերիշխող դիրք ունեցող, եթե նա (նրանք), որպես իրացնող կամ ձեռք բերող, իրացման կամ ձեռքբերման ծավալներով չի (չեն) գերազանցում տվյալ շուկայի մեկ տասներորդը:

2018 և 2019 թվականների ընթացքում Ապրանքային շուկայում իրացման առավել մեծ ծավալներ են ունեցել «Ալեքս Հոլդինգ», «Արմեն-Համիկ Եղբայրներ Հ/Ձ» և «Ալեքս Էնդ Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները:

2.1.1 «Ալեքս Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնաբաժնի մասով.

2018 թվականի ընթացքում «Ալեքս Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ «Ալեքս Հոլդինգ» ընկերություն) կողմից իրացվել է շուրջ ----- կգ շաքարավազ, որը շաքարավազի իրացման ընդհանուր ծավալում կազմել է ----%, իսկ 2019 թվականի ընթացքում՝ ----- կգ շաքարավազ, որը իրացման ընդհանուր ծավալում կազմել է ---: 2018 թվականի հունվարից մինչև 2020 թվականի մարտն ընկած ժամանակահատվածում «Ալեքս Հոլդինգ» ընկերության կողմից իրացվել է շուրջ ----- կգ շաքարավազ, որը իրացման ընդհանուր ծավալում կազմել է ----: Հաշվի առնելով վերոնշյալը և վերլուծելով նշված իրավական նորմերը՝ ստացվում է, որ «Ալեքս Հոլդինգ» ընկերությունը Ապրանքային շուկայում 2018 թվականից մինչև 2020 թվականի մարտ ամիսն ընկած ժամանակահատվածում ունեցել է գերիշխող դիրք:

2.1.2 «Արմեն-Համիկ Եղբայրներ Հ/Ձ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնաբաժնի մասով.

2018 թվականի ընթացքում «Արմեն-Համիկ Եղբայրներ Հ/Ձ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ «Արմեն-Համիկ Եղբայրներ Հ/Ձ» ընկերություն) կողմից իրացվել է շուրջ ---- կգ շաքարավազ, որը իրացման ընդհանուր ծավալում կազմել է --%, իսկ 2019 թվականի ընթացքում՝ --- կգ շաքարավազ, որը իրացման ընդհանուր ծավալում կազմել է --%: Հաշվի առնելով վերոնշյալը և վերլուծելով նշված իրավական նորմերը՝ ստացվում է, որ «Արմեն-Համիկ Եղբայրներ Հ/Ձ» ընկերությունը Ապրանքային շուկայում չի ունեցել գերիշխող դիրք, քանի որ ընկերության կողմից շաքարավազի իրացման մասնաբաժինը 2018 և 2019 թվականներին չի գերազանցել շուկայի մեկ տասներորդ մասը:

2.1.3 «Ալեքս Էնդ Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնաբաժնի մասով.

2018 թվականի ընթացքում «Ալեքս Էնդ Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ «Ալեքս Էնդ Հոլդինգ» ընկերություն) կողմից իրացվել է շուրջ

----- կգ շաքարավազ, որը իրացման ընդհանուր ծավալում կազմել է ---%, իսկ 2019 թվականի ընթացքում՝ ----- կգ շաքարավազ, որը իրացման ընդհանուր ծավալում կազմել է ---%: Հաշվի առնելով վերոնշյալը և վերլուծելով նշված իրավական նորմերը՝ ստացվում է, որ «Ալեքս էնդ Հոլդինգ» ընկերությունը Ապրանքային շուկայում չի ունեցել գերիշխող դիրք, քանի որ ընկերության կողմից շաքարավազի իրացման մասնաբաժինը 2018 և 2019 թվականներին չի գերազանցել շուկայի մեկ տասներորդ մասը:

3. «Ալեքս Հոլդինգ» ընկերության կողմից «Շաքարավազ» ապրանքային շուկայում իրականացված գործունեության մասին.

Վարչական վարույթի շրջանակներում Հանձնաժողովը «Ալեքս Հոլդինգ» ընկերության կողմից «Շաքարավազ» ապրանքային շուկայում իրականացված գործունեությունը վերլուծելու և գնահատելու նպատակով.

1. ուսումնասիրել է դիտարկվող ժամանակահատվածում ընկերության կողմից ներմուծված, արտադրված, ՀՀ տարածքում այլ տնտեսվարող սուբյեկտներից ձեռքբերված շաքարավազի ծավալները և արժեքները (ինքնարժեքը, ձեռքբերման գինը),

2. ուսումնասիրել է դիտարկվող ժամանակահատվածում ընկերության կողմից իրացված շաքարավազի ծավալները, ինքնարժեքն ու վաճառքի փաստացի գինը՝ ըստ մեծածախ և մանրածախ իրացման ոլորտների,

3. իրականացրել է համեմատական վերլուծություն՝ ընկերության կողմից իրացված շաքարավազի վաճառքի փաստացի գնի (առանց ԱԱՀ) և ինքնարժեքի միջև՝ հաշվի առնելով ընկերության կողմից կիրառվող պաշարների ինքնարժեքի հաշվարկման բանաձևը,

4. ուսումնասիրել է ընկերության կողմից իրացվող շաքարավազի ինքնարժեքի կառուցվածքը և գնահատվել այն ձևավորող բաղադրիչների տեսակարար կշիռը ինքնարժեքի կառուցվածքում,

5. ուսումնասիրել և համեմատել է շաքարավազ իրացնելու գործընթացում ընկերության կողմից գնորդ ընկերությունների նկատմամբ կիրառվող գները,

6. գնահատել է 2019 թվականի ընթացքում ընկերության կողմից իրացված շաքարավազից ստացված հասույթի տեսակարար կշիռը ընկերության ընդհանուր գործունեությունից ստացված հասույթում:

Այսպիսով, գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման, ներկայացված դիրքորոշումների, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և հետազոտման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները:

«Ալեքս Հոլդինգ» ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության վերլուծությունից պարզ է դարձել, որ վերջինիս կողմից 2018 թվականի հունվարից մինչև 2020 թվականի մարտը ներառյալ ներմուծվել է շուրջ ----- կգ շաքարավազ և արտադրվել է շուրջ ----- կգ շաքարավազ: Նշված ժամանակահատվածում ընկերության կողմից իրացվել է ----- կգ շաքարավազ, որից ----- կգ շաքարավազը իրացվել է մեծածախ, իսկ ----- կգ շաքարավազը՝ մանրածախ եղանակով:

Միաժամանակ Հանձնաժողովի կողմից դիտարկվել է «Ալեքս Հոլդինգ» ընկերության կողմից վերոնշյալ ժամանակահատվածում իրացված շաքարավազի միջին մեծածախ և միջին մանրածախ գների դինամիկան: Արդյունքում պարզվել է, որ 2018 թվականի հունվարին ընկերության կողմից իրացված շաքարավազի մեծածախ գինը (առանց ԱԱՀ) կազմել է ---- դրամ, իսկ 2020 թվականի մարտին՝ ---- դրամ, այսպիսով, նշված ժամանակահատվածում ընկերության կողմից մանրածախ իրացման ոլորտում իրացված շաքարավազի գինը ----- է շուրջ ----%-ով:

2018 թվականի հունվարին ընկերության կողմից իրացված շաքարավազի մանրածախ գինը (առանց ԱԱՀ) կազմել է --- դրամ, իսկ 2020 թվականի մարտին՝ --- դրամ, այսպիսով, նշված ժամանակահատվածում ընկերության կողմից մանրածախ իրացման ոլորտում իրացված շաքարավազի գինը ----- է շուրջ ---%-ով:

Միաժամանակ, պարզ է դարձել, որ վերոնշյալ ժամանակահատվածում էականորեն ----- են ընկերության կողմից շաքարավազի ներմուծման արժեքները: Մասնավորապես՝ 2018 թվականի ապրիլին այն կազմել է --- դրամ, իսկ 2020 թվականի մարտին՝ --- դրամ, այսինքն, շաքարավազի ներմուծման արժեքը ----- է շուրջ ---%-ով:

Բացի այդ նշված ժամանակահատվածում ----- է «Ալեքս Հոլդինգ» ընկերության կողմից արտադրվող շաքարավազի ինքնարժեքը. 2018 թվականի մայիսին այն կազմել է ---- դրամ, իսկ 2019 թվականի օգոստոսին՝ ---- դրամ: Այսինքն՝ շուրջ --%-ով տեղի է ունեցել ընկերության կողմից արտադրվող շաքարավազի ինքնարժեքի -----, որն առավելապես պայմանավորված է ----- :

ՀՀ ՊԵԿ կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության համաձայն՝ «Ալեքս Հոլդինգ» ընկերության տարեկան շրջանառությունը 2019 թվականին կազմել է շուրջ ----- դրամ, իսկ 2019 թվականի ընթացքում ընկերության կողմից իրացված շաքարավազից ստացված հասույթը կազմել է ----- դրամ, այսինքն՝ «Ալեքս Հոլդինգ» ընկերության 2019 թվականի շրջանառության շուրջ ----%-ը:

2020 թվականի հուլիսի 24-ին տեղի է ունեցել Հանձնաժողովի դռնբաց նիստ, որի ընթացքում քննարկվել են Վարչական վարույթում առկա փաստական հանգամանքները: 2020 թվականի հուլիսի 22-ի թիվ ԱՎ-2780 գրությամբ ընկերությանն էր տրամադրվել Վարչական վարույթի շրջանակներում իրականացված ուսումնասիրության նախնական արդյունքների վերաբերյալ տեղեկանքը և առաջարկվել է տեղեկանքում բարձրացված հարցերի վերաբերյալ «Ալեքս Հոլդինգ» ընկերության դիրքորոշումը և փաստարկները ներկայացվել Նիստի ընթացքում և (կամ) գրավոր՝ այդ գրությունը ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում: Նիստին իրենց մասնակցությունն են ապահովել «Ալեքս Հոլդինգ» ընկերության ներկայացուցիչները, ովքեր հայտնել են, որ համաձայն են տեղեկանքում նշված այն դիտարկման հետ, որ որոշ ամիսներին ընկերության կողմից իրացված շաքարավազի իրացման ինքնարժեքը ավելի բարձր է եղել, քան իրացման գինը, ինչը պայմանավորված է եղել «Ալեքս Հոլդինգ» ընկերության կողմից արտադրված շաքարավազի բարձր ինքնարժեքով: Բացի այդ, ընկերության ներկայացուցիչները հայտնել են, որ շաքարավազի գնի իջեցումը պայմանավորված է եղել այլ տնտեսվարող սուբյեկտների կողմից էականորեն ավելի էժան գնով շաքարավազի ներմուծմամբ և դրա հետևանքով շաքարավազի շուկայական գնի նվազեցմամբ, ինչի հետևանքով ընկերությունը իջեցրել է իր կողմից իրացվող շաքարավազի գինը՝ այն առավել մրցունակ դարձնելու նպատակով: Միաժամանակ, ընկերության ներկայացուցիչները հայտնել են, որ գնորդ ընկերություններին շաքարավազի իրացման գները սահմանելիս ընկերությունը հաշվի է առնում մի շարք հանգամանքներ, մասնավորապես՝ -----

-----:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Ալեքս Հոլդինգ» ընկերության կողմից իրացման գնի վրա ազդող որևէ գործոնի առկայությունը հիմնավորող փաստաթուղթ Հանձնաժողով չի ներկայացվել:

3.1 «Ալեքս հոլդինգ» ընկերության կողմից իրավախախտում կատարված լինելու հարցի կապակցությամբ.

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ Արգելվում է տնտեսվարող սուբյեկտների կողմից մենաշնորհ կամ գերիշխող դիրքի (այսուհետ՝ գերիշխող դիրք) չարաշահումը:

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գերիշխող դիրքի չարաշահում է համարվում՝ ա) իրացման կամ ձեռքբերման չհիմնավորված, խտրական գների սահմանումը կամ կիրառումը կամ օրենսդրությանը հակասող առևտրի այլ պայմանների ուղղակի կամ անուղղակի պարտադրումը,

դ) այլ տնտեսվարող սուբյեկտների կամ սպառողների նկատմամբ խտրական պայմանների (այդ թվում՝ գների) սահմանումը կամ կիրառումն այլ հավասար պայմաններում,

ժ) ապրանքի գնի չհիմնավորված բարձրացումը, իջեցումը կամ պահպանումը,

ժգ) այլ պայմանների կամ վարքագծի սահմանումը կամ կիրառումը, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը:

Վերոգրյալ նորմերից բխում է, որ օրենսդիրը Օրենքի 7-րդ հոդվածով սահմանել է գերիշխող դիրքի չարաշահումների դրսևորման մասնավոր եղանակներ և ամրագրել, որ այդպիսի գործողություններն արգելվում են:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնի չհիմնավորված իջեցումը տնտեսվարող սուբյեկտի կողմից որոշակի ժամանակահատվածում ապրանքի և (կամ) դրա փոխադարձ փոխարինելի ապրանքների գնի՝ տնտեսական պայմանների (գործոնների) առկայությամբ չպայմանավորված իջեցումն է:

Նույն հոդվածի համաձայն՝ տնտեսական պայմանները (գործոններ)՝ ապրանքի ձեռքբերման, արտադրության, իրացման (ծառայության մատուցման, աշխատանքի կատարման) հետ կապված ծախսերն են, հարկերը, տուրքերը, պարտադիր վճարները:

3.1.1 «Ալեքս Հոլդինգ» ընկերության կողմից շաքարավազի գնի չհիմնավորված իջեցման վերաբերյալ.

1. Վարչական վարույթի շրջանակներում «Ալեքս Հոլդինգ» ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության համաձայն՝ ընկերությունը, 2019 թվականի սեպտեմբեր ամսից սկսած, իջեցրել է շաքարավազի իրացման գինը, այն դեպքում, երբ ընկերության կողմից իրացվող շաքարավազի ինքնարժեքը ----- է: Այսպես՝ 2019 թվականի օգոստոս ամսին ընկերության կողմից իրացվող 1 կիլոգրամ շաքարավազի միջին իրացման գինը (առանց ԱԱՀ) կազմել է --- դրամ, իսկ սեպտեմբերին՝ --- դրամ: Միաժամանակ՝ 1 կիլոգրամ շաքարավազի ինքնարժեքը 2019 թվականի օգոստոսին կազմել է --- դրամ, իսկ սեպտեմբերին՝ --- դրամ: Ստացվում է, որ ընկերությունը նվազեցրել է իր կողմից իրացվող շաքարավազի գինը - % -ով այն պարագայում, երբ ինքնարժեքը նախորդ ամսվա համեմատ ----- է --% -ով: Նշված վարքագիծը ընկերության կողմից 2019 թվականի սեպտեմբեր ամսից շարունակվել է մինչև 2020 թվականի հունվար ամիսը (ներառյալ):

2. Հանձնաժողովն արձանագրել է, որ 2019 թվականի սեպտեմբեր ամսից մինչև 2020 թվականի փետրվար ամիսն ընկած ժամանակահատվածում «Ալեքս Հոլդինգ» ընկերության կողմից իրացվող շաքարավազի գները ավելի ցածր են եղել, քան դրա ինքնարժեքը: Նշված ցուցանիշների տարբերությունն իր առավելագույնին է հասել 2019 թվականի նոյեմբեր ամսին, երբ 1 կիլոգրամ շաքարավազի ինքնարժեքը կազմել է --- դրամ, այն դեպքում, երբ 1 կիլոգրամ շաքարավազի իրացման գինը առանց ԱԱՀ կազմել է --- դրամ: Ստացվում է, որ տվյալ ամսին 1 կիլոգրամ շաքարավազի իրացման միջին գինը շուրջ ---% -ով ավելի ցածր է եղել, քան դրա ինքնարժեքը:

Աղյուսակ 1

«Ալեքս Հոլդինգ» ընկերության կողմից իրացվող շաքարավազի ինքնարժեքի և իրացման արժեքի վերաբերյալ

3. Միաժամանակ, Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է ընկերության կողմից շաքարավազի իրացման ծավալների դինամիկան նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 2019 թվականի սեպտեմբերից մինչև 2020 թվականի փետրվարն ընկած ժամանակահատվածում ընկերության կողմից իրացվել է շուրջ ---- կգ շաքարավազ, այն դեպքում երբ 2018 թվականի սեպտեմբերից մինչև 2019 թվականի փետրվարն ընկած ժամանակահատվածում իրացվել է ----- կգ շաքարավազ: Ստացվում է, որ ընկերությունը նշված ժամանակահատվածում շաքարավազի իրացումից ստացել է վնաս, որի արդյունքում, սակայն, իրացման ծավալներն ----- են շուրջ -- %-ով:

4. 2019 թվականի սեպտեմբեր ամսից մինչև 2020 թվականի փետրվարն ընկած ժամանակահատվածում ընկերությունը, շաքարավազի իրացման համար սահմանելով ինքնարժեքից ավելի ցածր գին, կրել է շուրջ ----- դրամի վնաս:

5. Միաժամանակ, Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է շաքարավազ ներմուծող տնտեսվարող սուբյեկտների թվաքանակի դինամիկան «Ալեքս Հոլդինգ» ընկերության կողմից շաքարավազի գնի իջեցման ազդեցությունը գնահատելու նպատակով: Արդյունքում պարզվել է, որ 2019 թվականի 3-րդ եռամսյակում ՀՀ շաքարավազ է ներմուծել -- տնտեսվարող սուբյեկտ, 4-րդ եռամսյակում` --- տնտեսվարող սուբյեկտ, իսկ 2020 թվականի առաջին եռամսյակում` -- տնտեսվարող սուբյեկտ:

3.1.2 «Ալեքս Հոլդինգ» ընկերության կողմից խտրական պայմանների (այդ թվում՝ գների) սահմանման կամ կիրառման վերաբերյալ.

1. «Ալեքս Հոլդինգ» ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ ընկերությունը շաքարավազ իրացնելիս գնորդ ընկերությունների համար սահմանել և կիրառել է տարբեր գներ: Մասնավորապես՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ ընկերությունից 2019 թվականի ընթացում շաքարավազ է ձեռք բերել --- տնտեսվարող սուբյեկտ, որոնք ընկերությունից շաքարավազ ձեռք են բերել տարբերվող գներով:

2. Հանձնաժողովը գնահատել է գնորդ ընկերությունների ձեռքբերման ծավալները «Ալեքս Հոլդինգ» ընկերության կողմից շաքարավազի իրացման ընդհանուր ծավալի կառուցվածքում՝ տարեկան և ամսական կտրվածքներով: Ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ 2019 թվականի ընթացքում ընկերությունից շաքարավազի ձեռքբերման առավել մեծ ծավալներ ունեցող ընկերություններն են եղել՝ ----- ընկերությունները: Նշված -- ընկերությունները 2019 թվականի ընթացում ձեռք են բերել «Ալեքս Հոլդինգ» ընկերության կողմից մեծածախ եղանակով իրացված շաքարավազի --%-ը: Այս ընկերությունները հանդիսացել են նաև «Ալեքս Հոլդինգ» ընկերությունից շաքարավազի խոշոր գնորդներ՝ ամսական կտրվածքով նրանց ձեռքբերման ծավալները դիտարկելիս:

3. Հանձնաժողովը, ուսումնասիրելով գնորդ ընկերությունների կողմից շաքարավազի ձեռքբերման տարեկան և ամսական տվյալները, արձանագրել է, որ ----- ընկերությունը, որը 2019 թվականի ընթացում ձեռք է բերել «Ալեքս Հոլդինգ» ընկերության կողմից մեծածախ իրացված շաքարավազի --%-ը, հանդիսացել է ընկերությունից ամենացածր գնով շաքարավազ ձեռքբերող ընկերություններից մեկը՝ ձեռքբերելով շաքարավազը միջինում -- դրամով: ----- ընկերությանը հաջորդող՝ «Ալեքս Հոլդինգ» ընկերությունից շաքարավազի ձեռքբերման առավել խոշոր ծավալներ ունեցող երկրորդ ընկերությունը՝ ----- ընկերությունը (ձեռքբերման մասնաբաժինը կազմել է շուրջ -- %), հանդիսացել է ընկերությունից ամենաթանկ գնով շաքարավազ ձեռք բերող ընկերություններից մեկը՝ ձեռքբերելով շաքարավազը միջինում - ---- դրամով:

4. Հանձնաժողովը ուսումնասիրել է նաև «Ալեքս Հոլդինգ» ընկերության գնային քաղաքականությունը խոշոր առևտրային ցանցերին շաքարավազի իրացման գործընթացում: Պարզվել է, որ 2019 թվականի ընթացքում ընկերությունից առավել մեծ ծավալներով շաքարավազ են ձեռք բերել ----- ընկերությունները: Նշված ընկերություններին սակայն «Ալեքս Հոլդինգ» ընկերությունը շաքարավազը իրացրել է միմյանցից տարբերվող գներով: Այսպես՝ ---- և ----- ընկերությունների ----- կողմից շաքարավազի ձեռքբերման միջին ամսական գները 2019 թվականի հունվար ամսին կազմել են համապատասխանաբար՝ ---- և ---- դրամ: 2019 թվականի փետրվար ամսին ամսին ----- և ----- կողմից շաքարավազի ձեռքբերման միջին ամսական գները կազմել են համապատասխանաբար ---- և ---- դրամ: Նկարագրված գնային քաղաքականությունը «Ալեքս Հոլդինգ» ընկերության կողմից շարունակվել է նաև 2019 թվականի մյուս ամիսներին ---- և ---- ընկերություններին շաքարավազի իրացման գործընթացում: Արդյունքում ստացվում է, որ առևտրային ցանցերի շրջանում առավել խոշոր ձեռքբերման ծավալներ ունի ----- ընկերությունը, սակայն վերջինս շաքարավազ ձեռք է բերում ավելի թանկ գնով քան ----- ընկերությունը, որի կողմից շաքարավազի ձեռքբերման ծավալները շուրջ --- անգամ ավելի փոքր են քան ----- ընկերության ձեռքբերման ծավալներից:

5. Հանձնաժողովը «Ալեքս Հոլդինգ» ընկերության կողմից շաքարավազի իրացման գործընթացում խտրական գների սահմանման և կիրառման գործողությունները առավել ճշգրիտ գնահատելու նպատով ուսումնասիրել է նաև ընկերության իրացման գները օրական կտրվածքով: Այդ նպատակով դիտարկվել է ՀՀ ՊԵԿ կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը, որի արդյունքում նույնպես արձանագրվել է այն փաստը, որ 2019 թվականի ընթացքում՝ նույն օրը, ընկերությունը գնորդ ընկերություններին շաքարավազ է իրացրել տարբեր գներով: Օրինակ՝ 2019 թվականի նոյեմբերի 18-ին ----- ընկերությանը շաքարավազ է իրացրել ---- դրամով, այնինչ ----- ընկերությանը իրացվել է ---- դրամով: Օրինակ՝ 2019 թվականի նոյեմբերի 4-ին ----- ընկերությանը շաքարավազ է իրացրել ---- դրամով, այնինչ ---- ընկերությանը իրացվել է ---- դրամով: Կամ՝ 2019 թվականի դեկտեմբերի 3-ին ----- ընկերությունը շաքարավազ է իրացրել -- ընկերությունների՝ իրարից տարբերվող --- գներով: Մասնավորապես՝ ----- ընկերությանը շաքարավազ է իրացվել --- դրամով, ----- ընկերությանը՝ -- դրամով, ---- ընկերությանը՝ ---- դրամով, մնացած --- ընկերություններին՝ --- դրամով:

6. «Ալեքս Հոլդինգ» ընկերության կողմից շաքարավազի իրացման ոլորտում վերոնկարագրյալ գնային քաղաքականությունը շարունակվել է նաև 2020 թվականին: Այսպես՝ 2020 թվականի հունվարի 31-ին ----- ընկերությանը շաքարավազ է իրացվել --- դրամով, ----- ընկերությանը՝ ---- դրամով: 2020 թվականի հունվարի 8-ին «Ալեքս Հոլդինգ» ընկերությունը ----- ընկերությանը շաքարավազ է իրացրել --- դրամով, իսկ ----- ընկերությանը՝ ----- դրամով:

7. Հանձնաժողովը «Ալեքս Հոլդինգ» ընկերությունից պահանջել էր ներկայացել այն սկզբունքներն ու չափանիշները, որոնք ընկերությունը հաշվի է առնում շաքարավազի իրացման գործընթացում գնորդ ընկերությունների համար գներ սահմանելիս: «Ալեքս Հոլդինգ» ընկերության կողմից չի ներկայացվել այդպիսի սկզբունքների կամ չափանիշների առկայության կամ կիրառման մասին վկայող որևէ տեղեկատվություն կամ փաստաթուղթ:

8. Հանձնաժողովը «Ալեքս Հոլդինգ» ընկերությունից պահանջել էր Հանձնաժողով ներկայացնել ընկերության և շաքարավազի գնորդ հանդիսացող ընկերությունների միջև կնքված և 2018 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի փետրվարի 12-ն ընկած ժամանակահատվածում գործող պայմանագրերի պատճենները, պարզելու համար, թե արդյոք շաքարավազի իրացման գները ամրագրված են «Ալեքս Հոլդինգ» ընկերության և այլ ընկերությունների միջև կնքված պայմանագրերով: Ի պատասխան վերոնշյալ հարցման՝ «Ալեքս Հոլդինգ» ընկերությունը հայտնել է, որ շաքարավազի գնորդ հանդիսացող ընկերությունների

հետ պայմանագրեր չեն կնքվել, և մատակարարման հարաբերությունները կողմերի միջև կարգավորվել են ընկերության կողմից դուրս գրված հարկային հաշիվներով: Համապատասխան պայմանագրերի բացակայության մասին ընկերության ներկայացուցիչները հայտնել են նաև Հանձնաժողովի՝ 2020 թվականի հուլիսի 24-ին կայացած դռնբաց նիստի ընթացքում:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, Հանձնաժողովն արձանագրում է, որ «Ալեքս Հոլդինգ» ընկերությունը, շաքարավազի իրացման գործընթացում չունենալով հստակ գնային քաղաքականություն, սկզբունքներ և չափանիշներ, որոնք հաշվի է առնում գնորդ ընկերությունների համար շաքարավազի իրացման գները սահմանելիս, այլ հավասար պայմաններում տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ սահմանել և կիրառել է խտրական պայմաններ՝ այդ թվում խտրական գներ:

Ստացվում է, որ «Ալեքս Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը Ապրանքային շուկայում չարաշահել է իր գերիշխող դիրքը՝ սահմանելով և կիրառելով խտրական գներ:

3.1.3 «Ալեքս Հոլդինգ» ընկերության կողմից այնպիսի պայմանների կամ վարքագծի սահմանումը կամ կիրառումը, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը.

«Ալեքս Հոլդինգ» ընկերությունը 2018 թվականից մինչև 2020 թվականի մարտն ընկած ժամանակահատվածում հանդիսացել է Հայաստանի Հանրապետության տարածքում շաքարավազ ----- տնտեսվարող սուբյեկտը: Բացի այդ, ընկերությունը ունի ֆինանսական մեծ կարողություններ՝ արտադրական և գույքային համապատասխան ռեսուրսներ, իրացման համապատասխան ենթակառուցվածքներ, որոնց միջոցով իրականացնում է շաքարավազի իրացման գործընթացը՝ շաքարավազի գնորդ հանդիսացող ընկերություններին՝ Ապրանքային շուկայում պահպանելով իր գերիշխող դիրքը: Ընդ որում, «Ալեքս Հոլդինգ» ընկերության գործողություններն ուղղված են եղել Ապրանքային շուկայում իր մասնաբաժինը պահպանելուն, ինչը դրսևորվել է հետևյալ գործողություններով.

1. Շուկայում առավել էժան շաքարավազի առկայության պարագայում ընկերությունը իր կողմից արտադրված և ներմուծված շաքարավազի գինը իջեցրել է այնպես, որ հնարավոր լինի իրացնել շաքարավազը մրցունակ գնով՝ որոշ դեպքերում կրելով վնասներ: Արդյունքում այն տնտեսվարող սուբյեկտների համար, որոնք ներմուծել են «Ալեքս Հոլդինգ» ընկերության կողմից իրացվող շաքարավազի գնից համեմատաբար ավելի ցածր գնով շաքարավազ, այլևս նպատակահարմար չի լինում զբաղվել այդ գործունեությամբ, քանի որ Ապրանքային շուկայում գերիշխող դիրք ունեցող միակ տնտեսվարող սուբյեկտը նույնպես սկսում է շաքարավազ իրացնել էականորեն ավելի ցածր գնով և նրա գործողությունները հանգեցնում են կամ կարող են հանգեցնել Ապրանքային շուկայում տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը: Այսինքն, «Ալեքս Հոլդինգ» ընկերության գործողությունների (վարքագծի) արդյունքում Ապրանքային շուկայում ստեղծվում է այնպիսի իրավիճակ, որի պայմաններում այլ տնտեսվարող սուբյեկտների կողմից Ապրանքային շուկայում իրականացվող գործունեությունը՝ շաքարավազի ներմուծումը և իրացումը դառնում է տնտեսապես ոչ նպատակահարմար: Արդյունքում ստեղծվում են մրցակցային անհավասար պայմաններ ինչպես Ապրանքային շուկայում արդեն իսկ գործող՝ շաքարավազի ներմուծմամբ և իրացմամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների համար, այնպես էլ առաջանում են շուկա մուտք գործել ցանկացող տնտեսվարող սուբյեկտների համար խոչընդոտներ:

2. Շաքարավազի իրացման գործընթացը «Ալեքս Հոլդինգ» ընկերության կողմից իրականացվում է այնպես, որ շաքարավազի խոշոր գնորդ հանդիսացող և տնտեսական կարողություններ ու հնարավորություններ ունեցող տնտեսվարող սուբյեկտների համար

տնտեսապես նպատակահարմար չլինի շաքարավազի ներմուծումն իրականացնել ինքնուրույն: Օրինակ՝ ----- ընկերությունը, որը տարիներ շարունակ հանդիսացել է շաքարավազի ներմուծում իրականացնող խոշոր տնտեսվարող սուբյեկտ, ներկայումս շաքարավազ է ձեռք բերում «Ալեքս Հոլդինգ» ընկերությունից և հանդիսանում է ընկերությունից շաքարավազի ձեռքբերման առավել խոշոր ծավալներ ունեցող տնտեսվարող սուբյեկտը: Այդ իսկ պատճառով ----- ընկերությանը շաքարավազը իրացվում է ամենացածր գնով: ----- ընկերությունը նույնպես տարիներ շարունակ զբաղվել է շաքարավազի ներմուծմամբ, սակայն ներկայումս շաքարավազ ձեռք է բերում «Ալեքս Հոլդինգ» ընկերությունից և ----- հանդիսանում է ամենացածր գնով շաքարավազ ձեռքբերող ընկերությունը: ----- ընկերությունը շաքարավազն ավելի ցածր գնով է ձեռք բերում նույնիսկ ---- ընկերությունից, չնայած որ ձեռքբերման ծավալներով զգալիորեն զիջում է այդ ընկերությանը: Դա արվում է այն նպատակով, որ ---- ընկերության համար բացակայի շաքարավազ ներմուծելու տնտեսական նպատակահարմարությունը: Նշվածի արդյունքում ----- ընկերությունը հնարավորություն է ունենում իրեն պատկանող առևտրի օբյեկտներում այլ առևտրային ցանցերի համեմատությամբ ապահովել շաքարավազի առավել մրցունակ գին:

3. ---- ընկերության միջոցով «Ալեքս Հոլդինգ» ընկերությունը հնարավորություն է ունենում -----
-----: Իսկ ----- ընկերությունում շաքարավազի գնային քաղաքականությունը կազմակերպվում է այնպես, որպեսզի ապահովվի ինչպես սպառողների համար գրավչություն, այնպես էլ մրցունակ լինի մրցակից առևտրային ցանցերի գների համեմատությամբ:

3.2 «Ալեքս հոլդինգ» ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ.

Օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ Օրենքի խախտման դեպքում Հանձնաժողովն իրավասու է իր որոշմամբ տալու նախազգուշացում կամ նշանակելու տուգանք: Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերության համաձայն՝ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը հաշվի է առնում տվյալ իրավախախտման բնույթը, տևողությունը, իրավախախտման հնարավոր կամ փաստացի ազդեցությունը շուկայում մրցակցային իրավիճակի կամ սպառողների շահերի վրա, տվյալ տնտեսվարող սուբյեկտի կողմից սույն օրենքի խախտումների կրկնակիությունը, տնտեսվարող սուբյեկտի դիտավորության աստիճանը, տնտեսվարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարելու շարժառիթները և հանգամանքները, տնտեսվարող սուբյեկտի կողմից իրավախախտում կատարելու փաստն ընդունելու կամ Հանձնաժողովի հետ համագործակցելու հանգամանքը, տնտեսվարող սուբյեկտի վրա նշանակվող տուգանքի հնարավոր ազդեցությունը, տվյալ տնտեսվարող սուբյեկտի գործունեության ոլորտը և (կամ) տնտեսվարող սուբյեկտի պատմությունը:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Գերիշխող դիրքի չարաշահման համար նշանակվող տուգանքի չափը կազմում է իրավախախտմանը նախորդող տարվա հասույթի մինչև 10 տոկոսը: Նախորդ տարում 12 ամսից պակաս գործունեություն իրականացրած լինելու դեպքում սույն մասով նախատեսված իրավախախտման համար նշանակվող տուգանքի չափը կազմում է տնտեսվարող սուբյեկտի՝ իրավախախտմանը նախորդող, բայց ոչ ավելի, քան 12 ամսվա գործունեության ժամանակահատվածի հասույթի մինչև 10 տոկոսը:

Ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելիս Հանձնաժողովը, ի թիվս վերոնշյալի, հաշվի է առնում հետևյալ հանգամանքերը.

- Իրավախախտման բնույթը. «Ալեքս Հոլդինգ» ընկերությունը կողմից իրականացված իրավախախտումը վերաբերում է իր կողմից Ապրանքային շուկայում ունեցած գերիշխող դիրքի

չարաշահմանը, որը դրսևորվել է երեք խախտման հատկանիշներով (գների չհիմնավորված իջեցում, խտրական պայմանների և գների կիրառում, այնպիսի պայմանների կամ վարքագծի սահմանում կամ կիրառում, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը):

- Իրավախախտման տևողությունը. Հանձնաժողովի կողմից դիտարկված ողջ ժամանակահատվածում՝ 2018 թվականի հունվարից մինչև 2020 թվականի մարտ ամիսը «Ալեքս Հոլդինգ» ընկերությունը չարաշահել է Ապրանքային շուկայում՝ իր ունեցած գերիշխող դիրքը:

- Իրավախախտման բացասական ազդեցությունը. իրավախախտումը բացասական ազդեցություն է ունեցել Ապրանքային շուկայում մրցակցային իրավիճակի վրա, քանի որ

- ա) ընկերության կողմից այլ հավասար պայմաններում տնտեսվարող սուբյեկտների, այդ թվում առևտրային ցանցերի նկատմամբ սահմանվել և կիրառվել են խտրական պայմաններ՝ այդ թվում խտրական գներ, որոնք տնտեսվարող սուբյեկտի կամ սպառողի համար ստեղծում են անհավասար մրցակցային պայմաններ կամ անհավասար դրություն այլ տնտեսվարող սուբյեկտի կամ սպառողի համեմատությամբ:

- բ) «Ալեքս Հոլդինգ» ընկերության կողմից շաքարավազի իրացման գործընթացներում սահմանվում կամ կիրառվում են այնպիսի պայմաններ կամ վարքագիծ, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել Ապրանքային շուկայում տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը: Այսպես՝ «Ալեքս Հոլդինգ» ընկերության կողմից ստեղծվել են մրցակցային անհավասար պայմաններ ինչպես Ապրանքային շուկայում արդեն իսկ գործող՝ շաքարավազի ներմուծմամբ և իրացմամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների համար, այնպես էլ առաջանում են շուկա մուտք գործել ցանկացող տնտեսվարող սուբյեկտների համար խոչընդոտներ:

- Իրավախախտում կատարելու դիտավորությունը, որի մասին է վկայում ընկերության կողմից այն վարքագծի կամ գործողությունների իրականացումը, որն ուղղված է Ապրանքային շուկայում իր ունեցած գերիշխող դիրքի պահպանմանը և այլ տնտեսվարող սուբյեկտների համար շուկա մուտք գործելու անբարենպաստ և ոչ նպատակահարմար պայմանների առաջացմանը:

- Տնտեսվարող սուբյեկտի ունեցած ավանդը Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման գործընթացում. «Ալեքս Հոլդինգ» ընկերությունը ՀՀ տարածքում շաքարավազի արտադրությամբ զբաղվող միակ տնտեսվարող սուբյեկտն է, այսինքն ապահովում է Հայաստանի Հանրապետության՝ սեփական արտադրությամբ շաքարավազով ինքնաբավ լինելու հանգամանքը:

- «Ալեքս Հոլդինգ» ընկերության հասույթի ---%-ը ձևավորվում է շաքարավազի իրացման ոլորտում իրականացված գործունեության արդյունքում:

Այսպիսով, վերոնշյալ հանգամանքների համադրության արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է, որ «Ալեքս Հոլդինգ» ընկերության կողմից իրավախախտումը շարունակվել է նաև 2020 թվականին, ուստի ընկերության նկատմամբ անհրաժեշտ է նշանակել տուգանք՝ «Ալեքս Հոլդինգ» ընկերության կողմից 2019 թվականի ընթացքում շաքարավազի շրջանառությունից ստացված հասույթի՝ ----- դրամի -----%-ի չափով՝ 24 780 000 (քսանչորս միլիոն յոթ հարյուր ութսուն հազար) դրամ, որը կազմում է «Ալեքս Հոլդինգ» ընկերության նախորդ տարվա հասույթի՝ ---- դրամի -----%-ը:

4. «Արմեն-Համիկ Եղբայրներ Հ/Ձ» ընկերության կողմից «Շաքարավազ» ապրանքային շուկայում իրականացված գործունեության մասին.

Վարչական վարույթի շրջանակներում Հանձնաժողովը «Արմեն-Համիկ Եղբայրներ Հ/Ձ» ընկերության կողմից «Շաքարավազ» ապրանքային շուկայում իրականացված գործունեությունը վերլուծելու և գնահատելու նպատակով.

1. ուսումնասիրել է դիտարկվող ժամանակահատվածում ընկերության կողմից ներմուծված, արտադրված, ՀՀ տարածքում այլ տնտեսվարող սուբյեկտներից ձեռքբերված շաքարավազի ծավալները և դրանց արժեքները (ինքնարժեքը, ձեռքբերման գինը),

2. ուսումնասիրել է դիտարկվող ժամանակահատվածում ընկերության կողմից իրացված շաքարավազի ծավալները, դրանց ինքնարժեքն ու վաճառքի փաստացի գինը՝ ըստ մեծածախ և մանրածախ իրացման ոլորտների,

3. իրականացրել է համեմատական վերլուծություն՝ ընկերության կողմից իրացված շաքարավազի վաճառքի փաստացի գնի (առանց ԱԱՀ) և ինքնարժեքի միջև՝ հաշվի առնելով ընկերության կողմից կիրառվող՝ պաշարների ինքնարժեքի գնահատման մեթոդը,

4. ուսումնասիրել է ընկերության կողմից իրացվող շաքարավազի ինքնարժեքի կառուցվածքը և գնահատվել այն ձևավորող բաղադրիչների տեսակարար կշիռը ինքնարժեքի կառուցվածքում,

5. ուսումնասիրել և համեմատել է շաքարավազ իրացնելու գործընթացում ընկերության կողմից գնորդ ընկերությունների նկատմամբ կիրառվող գները:

Այսպիսով, գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման, ներկայացված դիրքորոշումների, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և հետազոտման արդյունքում Հանձնաժողովը հաստատել է համարում հետևյալ փաստական հանգամանքները:

«Արմեն-Համիկ Եղբայրներ Հ/Ձ» ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության վերլուծությունից պարզ է դարձել, որ վերջինիս կողմից 2018 թվականի հունիսից մինչև 2020 թվականի մարտը ներառյալ ներմուծվել է շուրջ ----- կգ շաքարավազ -----
-----: Նշված ժամանակահատվածում ընկերության կողմից իրացվել է ----- կգ շաքարավազ, որից ---- կգ շաքարավազը իրացվել է մեծածախ, իսկ ----- կգ շաքարավազը մանրածախ իրացման ոլորտում:

Միաժամանակ Հանձնաժողովի կողմից դիտարկվել է «Արմեն-Համիկ Եղբայրներ Հ/Ձ» ընկերության կողմից վերոնշյալ ժամանակահատվածում իրացված շաքարավազի միջին մեծածախ և միջին մանրածախ գների դինամիկան: Արդյունքում պարզվել է, որ 2018 թվականի հունիսին ընկերության կողմից իրացված շաքարավազի մեծածախ գինը (առանց ԱԱՀ) կազմել է --- դրամ, իսկ 2020 թվականի մարտին ----- դրամ, այսպիսով նշված ժամանակահատվածում ընկերության կողմից մանրածախ իրացման ոլորտում իրացված շաքարավազի գինը ----- է շուրջ ---%-ով:

2018 թվականի հունիսին ընկերության կողմից իրացված շաքարավազի մանրածախ գինը (առանց ԱԱՀ) կազմել է --- դրամ, իսկ 2020 թվականի մարտին --- դրամ, այսպիսով նշված ժամանակահատվածում ընկերության կողմից մանրածախ իրացման ոլորտում իրացված շաքարավազի գինը ----- է շուրջ --%-ով:

Միաժամանակ պարզ է դարձել, որ վերոնշյալ ժամանակահատվածում էականորեն ----- են ընկերության կողմից շաքարավազի ներմուծման արժեքները: Մասնավորապես՝ 2018 թվականի հունիսին այն կազմել է --- դրամ, իսկ 2020 թվականի նոյեմբերին՝ ---- դրամ, այսինքն ընկերության շաքարավազի ներմուծման արժեքը ----- է շուրջ --%-ով:

2019 թվականի հունիս ամսին «Արմեն-Համիկ Եղբայրներ Հ/Ձ» ընկերության կողմից շաքարավազի իրացման գները մայիս ամսվա համեմատությամբ ----- են --%-ով, այն պարագայում, երբ ինքնարժեքը փոփոխվել է ընդամենը --%-ով: Նշված ժամանակահատվածում ընկերությունը -----: Այս համատեքստում հարկ է նշել, որ միևնույն ժամանակահատվածում՝ 2019 թվականի մայիս ամսից սկսած, շաքարավազի արտադրություն և ներմուծում է սկսել

իրականացնել (2018 թվականի սեպտեմբերից մինչև 2019 թվականի ապրիլ ամիսը ներառյալ ----
-----) ----- ընկերությունը:

Դիտարկված մյուս ամիսների ընթացքում (բացի 2019 թվականի հունիս ամսից) ընկերության կողմից շաքարավազի իրացման գնային փոփոխությունները չեն գերազանցել -%-ը և առավելապես իրականացվել են ինքնարժեքի փոփոխությունների հետ համաչափ:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է նաև «Արմեն-Համիկ Եղբայրներ Հ/Ձ» ընկերության կողմից իրացված շաքարավազի գները գնորդ ընկերություններին: Ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովն արձանագրել է, որ ընկերության կողմից սահմանված գները տարբեր գնորդներին շաքարավազ իրացնելու գործընթացում միմյանցից գրեթե չեն տարբերվել:

Միաժամանակ պարզ է դարձել, որ «Արմեն-Համիկ Եղբայրներ Հ/Ձ» ընկերության կողմից ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը իրացված շաքարավազի գները տարբեր ամիսներին էականորեն ավելի բարձր են եղել, քան այլ գնորդների նկատմամբ կիրառված գները: Ավելի բարձր գնի սահմանման հիմնավորվածությունը պարզելու նպատակով Հանձնաժողովն ուսումնասիրել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից կազմակերպված N ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃ-1/19-ՍՆՆԴԱՄԹԵՐՔ-1 ծածկագրով գնման ընթացակարգին առնչվող փաստաթղթերը: Արդյունքում պարզվել է, որ ընկերությունը նշված գնման ընթացակարգի շրջանակներում ճանաչվել է հաղթող մասնակից և պարտավորվել է 2019 թվականի ընթացքում ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը մատակարարել 23000 կիլոգրամ շաքարավազ 276 դրամով (ներառյալ ԱԱՀ): Այսինքն ստացվում է, որ ընկերությունը պայմանագիր է կնքել 2019 թվականի փետրվար ամսին, երբ իր կողմից իրացվող շաքարավազի միջին գինը կազմել է 276 դրամ, և պարտավորվել է պայմանագրի գործողության ողջ ժամանակահատվածում շաքարավազի մատակարարումներն իրականացնել այդ գնով, և դա է պատճառը, որ մատակարարումների իրականացման ողջ ժամանակահատվածում «Արմեն-Համիկ Եղբայրներ Հ/Ձ» ընկերությունը, անկախ իր կողմից այլ տնտեսվարող սուբյեկտներին ավելի ցածր գնով շաքարավազ իրացնելու հանգամանքին, ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը շաքարավազն իրացրել է 276 դրամով:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը պետական գնումների շրջանակներում շաքարավազի իրացման գործընթացներում «Արմեն-Համիկ Եղբայրներ Հ/Ձ» ընկերության վարքագծի վերաբերյալ ամբողջական պատկերացում ստանալու նպատակով ուսումնասիրել է PPCM էլեկտրոնային գնումների համակարգում տեղակայված՝ պետական գնումների շրջանակներում ձեռքբերվող շաքարավազի մատակարարների վերաբերյալ տեղեկատվությունը:

Արդյունքում ուսումնասիրվել է 2018-2020 թվականների ընթացքում «Գնումների մասին» օրենքի իմաստով պատվիրատու հանդիսացող թվով 15 պետական մարմինների կարիքների համար շաքարավազի ձեռքբերման նպատակով հայտարարված 16 գնման ընթացակարգի վերաբերյալ տեղեկատվություն: Նշված տեղեկատվության վերլուծության արդյունքում պարզ է դարձել, որ 2018-2020 թվականների ընթացքում 15 պետական մարմնի կողմից ձեռք է բերվել շուրջ 2 600 000 կգ շաքարավազ՝ ընհանուր 763 500 000 դրամ արժեքով: Ընդ որում՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ այդ գնման ընթացակարգերին հիմնականում մասնակցություն են ունենում «Արմեն-Համիկ Եղբայրներ Հ/Ձ» ընկերության գնորդ հանդիսացող որոշ տնտեսվարող սուբյեկտներ: Օրինակ՝ «Ցիկլոիդ» ընկերությունը մասնակցել է 15 մրցույթից 10-ին, որոնցից 3 գնման ընթացակարգի շրջանակներում հաղթող է ճանաչվել և մատակարարել է շուրջ 410 000 կգ շաքարավազ: «Մակրո Ֆուդ» ընկերությունը մասնակցել է 3 գնման ընթացակարգի, «Ֆոտոն» ընկերությունը՝ 5, «Սավա» ընկերությունը՝ 2 գնման ընթացակարգի և հաղթող է ճանաչվել դրանցից 1-ում: Միաժամանակ պարզ է դարձել, որ պատվիրատուները իրենց կարիքների համար շաքարավազ հիմնականում ձեռք են բերում

սննդամթերքի գնման ընթացակարգերի շրջանակներում և մասնակիցները, որպես կանոն, միաժամանակ մասնակցում են այդ մրցույթի տարբեր չափաբաժիններին, իսկ հաղթող ճանաչվելու պարագայում պատվիրատուներին մատակարարում են տարբեր տեսակի սննդամթերք:

ՀՀ ՊԵԿ կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության համաձայն «Արմեն-Համիկ Եղբայրներ Հ/Ձ» ընկերության տարեկան շրջանառությունը 2019 թվականին կազմել է շուրջ ----- դրամ, իսկ 2019 թվականի ընթացքում ընկերության կողմից իրացված շաքարավազից ստացված հասույթը կազմել է ----- դրամ, այսինքն շուրջ` --%:

Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման, ներկայացված դիրքորոշումների, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և հետազոտման արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է, որ «Արմեն-Համիկ Եղբայրներ Հ/Ձ» ընկերությունը Ապրանքային շուկայում չունի գերիշխող դիրք և նրա գործունեության ուսումնասիրության արդյունքում Օրենքի խախտման փաստեր չեն հայտնաբերվել:

5. «Ալեքս Էնդ Հոլդինգ» ընկերության կողմից «Շաքարավազ» ապրանքային շուկայում իրականացված գործունեության մասին.

Վարչական վարույթի շրջանակներում Հանձնաժողովը «Ալեքս Էնդ Հոլդինգ» ընկերության կողմից «Շաքարավազ» ապրանքային շուկայում իրականացված գործունեությունը վերլուծելու և գնահատելու նպատակով.

1. ուսումնասիրել է դիտարկվող ժամանակահատվածում ընկերության կողմից ներմուծված, արտադրված, ՀՀ տարածքում այլ տնտեսվարող սուբյեկտներից ձեռքբերված շաքարավազի ծավալները և դրանց արժեքները (ինքնարժեքը, ձեռքբերման գինը),

2. ուսումնասիրել է դիտարկվող ժամանակահատվածում ընկերության կողմից իրացված շաքարավազի ծավալները, դրանց ինքնարժեքն ու վաճառքի փաստացի գինը՝ ըստ մեծածախ և մանրածախ իրացման ոլորտների,

3. իրականացրել է համեմատական վերլուծություն՝ ընկերության կողմից իրացված շաքարավազի վաճառքի փաստացի գնի (առանց ԱԱՀ) և ինքնարժեքի միջև՝ հաշվի առնելով ընկերության կողմից կիրառվող՝ պաշարների ինքնարժեքի գնահատման մեթոդը,

4. ուսումնասիրել է ընկերության կողմից իրացվող շաքարավազի ինքնարժեքի կառուցվածքը և գնահատվել այն ձևավորող բաղադրիչների տեսակարար կշիռը ինքնարժեքի կառուցվածքում,

5. ուսումնասիրել և համեմատել է շաքարավազ իրացնելու գործընթացում ընկերության կողմից գնորդ ընկերությունների նկատմամբ կիրառվող գները:

Այսպիսով, գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման, ներկայացված դիրքորոշումների, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և հետազոտման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները:

«Ալեքս Էնդ Հոլդինգ» ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության վերլուծությունից պարզ է դարձել, որ վերջինիս կողմից 2018 թվականի հունվարից մինչև 2020 թվականի մարտը ներառյալ ընկած ժամանակահատվածում շաքարավազ ներմուծվել է միայն 2018 թվականի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին՝ շուրջ ----- կգ: Նշված ժամանակահատվածում ընկերությունը շաքարավազ է ձեռք բերել նաև ՀՀ տարածքում, բացառապես ----- շուրջ ---- կգ:

«Ալեքս Էնդ Հոլդինգ» ընկերության կողմից 2018 թվականի սեպտեմբերից մինչև 2020 թվականի մարտը ներառյալ ընկած ժամանակահատվածում իրացվել է շուրջ ----- կգ շաքարավազ՝ միայն մեծածախ իրացման ոլորտում:

Միաժամանակ Հանձնաժողովի կողմից դիտարկվել է «Ալեքս Էնդ Հոլդինգ» ընկերության կողմից վերոնշյալ ժամանակահատվածում իրացված շաքարավազի միջին մեծածախ գների

դինամիկան: Արդյունքում պարզվել է, որ 2018 թվականի սեպտեմբերին ընկերության կողմից իրացված շաքարավազի մեծածախ գինը (առանց ԱԱՀ) կազմել է ---- դրամ, իսկ 2020 թվականի մարտին --- դրամ, այսպիսով նշված ժամանակահատվածում ընկերության կողմից մանրածախ իրացման ոլորտում իրացված շաքարավազի գինը ----- է շուրջ --%-ով:

Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման, ներկայացված դիրքորոշումների, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և հետազոտման արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է, որ «Ալբս էնդ Հոլդինգ» ընկերությունը Ապրանքային շուկայում չունի գերիշխող դիրք և նրա գործունեության ուսումնասիրության արդյունքում Օրենքի խախտման փաստեր չեն հայտնաբերվել:

6. Առևտրային ցանցերի գործունեության վերաբերյալ:

6.1. «Սիթի» ընկերության կողմից «Շաքարավազ» ապրանքային շուկայում իրականացված գործունեության մասին.

Վարչական վարույթի շրջանակներում Հանձնաժողովը «Սիթի» ընկերության կողմից «Շաքարավազ» ապրանքային շուկայում իրականացված գործունեությունը վերլուծելու և գնահատելու նպատակով.

1. ուսումնասիրել է դիտարկվող ժամանակահատվածում ընկերության կողմից ձեռքբերված շաքարավազի ծավալները և դրանց ձեռքբերման գները,

2. ուսումնասիրել է դիտարկվող ժամանակահատվածում ընկերության կողմից իրացված շաքարավազի ծավալները՝ մանրածախ իրացման ոլորտում, դրանց ինքնարժեքն ու վաճառքի փաստացի գինը,

3. իրականացրել է համեմատական վերլուծություն՝ ընկերության կողմից իրացված շաքարավազի վաճառքի փաստացի գնի (առանց ԱԱՀ) և ինքնարժեքի միջև՝ հաշվի առնելով ընկերության կողմից կիրառվող՝ պաշարների ինքնարժեքի գնահատման մեթոդը,

4. ուսումնասիրել է ընկերության կողմից իրացվող շաքարավազի ինքնարժեքի կառուցվածքը և գնահատվել այն ձևավորող բաղադրիչների տեսակարար կշիռը ինքնարժեքի կառուցվածքում,

5. ուսումնասիրել և համեմատել է շաքարավազ գնելու գործընթացում մատակարարների կողմից ընկերության նկատմամբ կիրառվող գները,

6. Գնահատել է 2019 թվականի ընթացքում ընկերության կողմից իրացված շաքարավազից ստացված հասույթի տեսակարար կշիռը ընկերության ընդհանուր գործունեությունից ստացված հասույթում:

Այսպիսով, գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման, ներկայացված դիրքորոշումների, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և հետազոտման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները:

ՀՀ ՊԵԿ կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության համաձայն «Սիթի» ընկերության տարեկան շրջանառությունը 2019 թվականին կազմել է շուրջ -----դրամ: Ընկերության պաշտոնական կայքում (www.yerevan-city.am) զետեղված տեղեկատվության համաձայն՝ «Սիթի» ընկերությանը պատկանում է 24 առևտրային օբյեկտ՝ «Երևան Սիթի» ապրանքային նշանի ներքո:

«Սիթի» ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության վերլուծությունից պարզ է դարձել, որ վերջինիս կողմից 2018 թվականի հուլիսից մինչև 2020 թվականի մարտը ներառյալ ձեռք է բերվել շուրջ ----- կգ շաքարավազ (ընկերությունը սկսել է գործունեություն իրականացնել 2018 թվականի հունիս ամսից): Նշված ժամանակահատվածում

ընկերության կողմից իրացվել է ----- կգ շաքարավազ՝ բացառապես ընկերության պատկանող մանրածախ առևտրային ցանցի միջոցով:

Միաժամանակ Հանձնաժողովի կողմից դիտարկվել է «Սիթի» ընկերության կողմից վերոնշյալ ժամանակահատվածում իրացված շաքարավազի միջին մանրածախ գների դինամիկան: Արդյունքում պարզվել է, որ 2018 թվականի հուլիսին ընկերության կողմից իրացված շաքարավազի մանրածախ գինը (առանց ԱԱՀ) կազմել է --- դրամ, իսկ 2020 թվականի մարտին --- դրամ, այսպիսով նշված ժամանակահատվածում ընկերության կողմից մանրածախ իրացման ոլորտում իրացված շաքարավազի գինը ----- է շուրջ --%-ով:

Միաժամանակ պարզ է դարձել, որ վերոնշյալ ժամանակահատվածում էականորեն ----- են ընկերության կողմից շաքարավազի ձեռքբերման արժեքները: Մասնավորապես՝ 2018 թվականի հուլիսին այն կազմել է --- դրամ, իսկ 2020 թվականի մարտին՝ --- դրամ, այսինքն շաքարավազի ձեռքբերման արժեքը ----- է շուրջ ---%-ով:

ՀՀ ՊԵԿ կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության համաձայն «Սիթի» ընկերության տարեկան շրջանառությունը 2019 թվականին կազմել է շուրջ ----- դրամ, իսկ 2019 թվականի ընթացքում ընկերության կողմից իրացված շաքարավազից ստացված հասույթը կազմել է ----- դրամ, այսինքն շուրջ՝ --%:

Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման, ներկայացված դիրքորոշումների, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և հետազոտման արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է, որ «Սիթի» ընկերությունը որպես առևտրային ցանց ունի գերիշխող դիրք և նրա գործունեության ուսումնասիրության արդյունքում Օրենքի խախտման փաստեր չեն հայտնաբերվել:

6.2 «Մաջիդ Ալ Ֆութաիմ հայփերմարքեթս էյ-էմ» ընկերության կողմից «Շաքարավազ» ապրանքային շուկայում իրականացված գործունեության մասին.

Վարչական վարույթի շրջանակներում Հանձնաժողովը «Մաջիդ Ալ Ֆութաիմ հայփերմարքեթս էյ-էմ» ընկերության կողմից «Շաքարավազ» ապրանքային շուկայում իրականացված գործունեությունը վերլուծելու և գնահատելու նպատակով.

1. ուսումնասիրել է դիտարկվող ժամանակահատվածում ընկերության կողմից ձեռքբերված շաքարավազի ծավալները և դրանց ձեռքբերման գները,

2. ուսումնասիրել է դիտարկվող ժամանակահատվածում ընկերության կողմից իրացված շաքարավազի ծավալները՝ մանրածախ իրացման ոլորտում, դրանց ինքնարժեքն ու վաճառքի փաստացի գինը,

3. իրականացրել է համեմատական վերլուծություն՝ ընկերության կողմից իրացված շաքարավազի վաճառքի փաստացի գնի (առանց ԱԱՀ) և ինքնարժեքի միջև՝ հաշվի առնելով ընկերության կողմից կիրառվող՝ պաշարների ինքնարժեքի գնահատման մեթոդը,

4. ուսումնասիրել է ընկերության կողմից իրացվող շաքարավազի ինքնարժեքի կառուցվածքը և գնահատվել այն ձևավորող բաղադրիչների տեսակարար կշիռը ինքնարժեքի կառուցվածքում,

5. ուսումնասիրել և համեմատել է շաքարավազ գնելու գործընթացում մատակարարների կողմից ընկերության նկատմամբ կիրառվող գները,

6. Գնահատել է 2019 թվականի ընթացքում ընկերության կողմից իրացված շաքարավազից ստացված հասույթի տեսակարար կշիռը ընկերության ընդհանուր գործունեությունից ստացված հասույթում:

Այսպիսով, գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման, ներկայացված դիրքորոշումների, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և հետազոտման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները:

ՀՀ ՊԵԿ կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության համաձայն «Մաջիդ Ալ Ֆութաիմ հայփերմարքեթս էյ-էմ» ընկերության տարեկան շրջանառությունը 2019 թվականին կազմել է շուրջ ----- դրամ: Ընկերության պաշտոնական կայքում (<https://www.carrefourarmenia.com/>) գետեղված տեղեկատվության համաձայն՝ «Մաջիդ Ալ Ֆութաիմ հայփերմարքեթս էյ-էմ» ընկերությանը պատկանում է 2 առևտրային օբյեկտ՝ «Քարֆուր» ապրանքային նշանի ներքո:

«Մաջիդ Ալ Ֆութաիմ հայփերմարքեթս էյ-էմ» ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության վերլուծությունից պարզ է դարձել, որ վերջինիս կողմից 2018 թվականի հունվարից մինչև 2020 թվականի մարտը ներառյալ իրացվել է շուրջ ----- կգ շաքարավազ՝ բացառապես ընկերության պատկանող մանրածախ առևտրային ցանցի միջոցով:

Միաժամանակ Հանձնաժողովի կողմից դիտարկվել է «Մաջիդ Ալ Ֆութաիմ հայփերմարքեթս էյ-էմ» ընկերության կողմից վերոնշյալ ժամանակահատվածում իրացված շաքարավազի միջին մանրածախ գների դինամիկան: Արդյունքում պարզվել է, որ 2018 թվականի հունվարին ընկերության կողմից իրացված շաքարավազի մանրածախ գինը (առանց ԱԱՀ) կազմել է --- դրամ, իսկ 2020 թվականի մարտին --- դրամ, այսպիսով նշված ժամանակահատվածում ընկերության կողմից մանրածախ իրացման ոլորտում իրացված շաքարավազի գինը ----- է շուրջ ---%-ով:

Միաժամանակ պարզ է դարձել, որ վերոնշյալ ժամանակահատվածում էականորեն ----- են ընկերության կողմից շաքարավազի ձեռքբերման արժեքները: Մասնավորապես՝ 2018 թվականի հունվարին այն կազմել է --- դրամ, իսկ 2020 թվականի մարտին՝ --- դրամ, այսինքն շաքարավազի ձեռքբերման արժեքը ----- է շուրջ --%-ով:

ՀՀ ՊԵԿ կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության համաձայն «Մաջիդ Ալ Ֆութաիմ հայփերմարքեթս էյ-էմ» ընկերության տարեկան շրջանառությունը 2019 թվականին կազմել է շուրջ ----- դրամ, իսկ 2019 թվականի ընթացքում ընկերության կողմից իրացված շաքարավազից ստացված հասույթը կազմել է ----- դրամ, այսինքն շուրջ՝ --%:

Միաժամանակ Հանձնաժողովն արձանագրել է, որ «Մաջիդ Ալ Ֆութաիմ հայփերմարքեթս էյ-էմ» ընկերությունը 2019 թվականի նոյեմբեր ամսից մինչև հունվար ամիսը ներառյալ շաքարավազի ձեռքբերումները իրականացրել է ----- ընկերությունից, իսկ 2020 թվականի փետրվար և մարտ ամիսներին ----- ընկերությունից:

Ընդ որում՝ 2019 թվականի նոյեմբոր ամսին ընկերությունը հոկտեմբեր ամսվա համեմատ շաքարավազի իրացման գինը իջեցրել է շուրջ --%-ով միջինում --- դրամից դարձնելով --- դրամ: Նշված ժամանակահատվածում շուրջ -%-ով ----- է նաև իրացվող շաքարավազի ինքնարժեքը 1 կիլոգրամի հաշվով --- դրամից դառնալով --- դրամ:

Ստացվում է, որ ընկերությունը նվազեցրել է իր կողմից իրացվող շաքարավազի գինը --- %-ով այն պարագայում, երբ ինքնարժեքը նախորդ ամսվա համեմատ ----- է --%-ով, այսինքն՝ շաքարավազի իրացման գնի նվազեցումը չի եղել դրա ինքնարժեքի փոփոխության հետ համաչափ:

Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման, ներկայացված դիրքորոշումների, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և հետազոտման արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է, որ «Մաջիդ Ալ Ֆութաիմ հայփերմարքեթս էյ-էմ» ընկերությունը որպես առևտրային ցանց չունի գերիշխող դիրք և նրա գործունեության ուսումնասիրության արդյունքում Օրենքի խախտման փաստեր չեն հայտնաբերվել:

6.3. «Սաս-Գրուպ» ընկերության կողմից «Շաքարավազ» ապրանքային շուկայում իրականացված գործունեության մասին.

Վարչական վարույթի շրջանակներում Հանձնաժողովը «Սաս-Գրուպ» ընկերության կողմից «Շաքարավազ» ապրանքային շուկայում իրականացված գործունեությունը վերլուծելու և գնահատելու նպատակով.

1. ուսումնասիրել է դիտարկվող ժամանակահատվածում ընկերության կողմից ձեռքբերված շաքարավազի ծավալները և դրանց ձեռքբերման գները,

2. ուսումնասիրել է դիտարկվող ժամանակահատվածում ընկերության կողմից իրացված շաքարավազի ծավալները՝ մանրամասն իրացման ոլորտում, դրանց ինքնարժեքն ու վաճառքի փաստացի գինը,

3. իրականացրել է համեմատական վերլուծություն՝ ընկերության կողմից իրացված շաքարավազի վաճառքի փաստացի գնի (առանց ԱԱՀ) և ինքնարժեքի միջև՝ հաշվի առնելով ընկերության կողմից կիրառվող՝ պաշարների ինքնարժեքի գնահատման մեթոդը,

4. ուսումնասիրել է ընկերության կողմից իրացվող շաքարավազի ինքնարժեքի կառուցվածքը և գնահատվել այն ձևավորող բաղադրիչների տեսակարար կշիռը ինքնարժեքի կառուցվածքում,

5. ուսումնասիրել և համեմատել է շաքարավազ գնելու գործընթացում մատակարարների կողմից ընկերության նկատմամբ կիրառվող գները,

6. Գնահատել է 2019 թվականի ընթացքում ընկերության կողմից իրացված շաքարավազից ստացված հասույթի տեսակարար կշիռը ընկերության ընդհանուր գործունեությունից ստացված հասույթում:

Այսպիսով, գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման, ներկայացված դիրքորոշումների, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և հետազոտման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները:

ՀՀ ՊԵԿ կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության համաձայն «Սաս-Գրուպ» ընկերության տարեկան շրջանառությունը 2019 թվականին կազմել է շուրջ ----- դրամ: Ընկերության պաշտոնական կայքում (<http://www.sas.am/>) զետեղված տեղեկատվության համաձայն՝ «Սաս-Գրուպ» ընկերությանը պատկանում է 7 առևտրային օբյեկտ՝ «Սաս Սուպերմարկետ» ապրանքային նշանի ներքո:

«Սաս-Գրուպ» ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության վերլուծությունից պարզ է դարձել, որ վերջինիս կողմից 2018 թվականի հունվարից մինչև 2020 թվականի մարտը ներառյալ իրացվել է շուրջ ----- կգ շաքարավազ՝ բացառապես ընկերության պատկանող մանրամասն առևտրային ցանցի միջոցով:

Միաժամանակ Հանձնաժողովի կողմից դիտարկվել է «Սաս-Գրուպ» ընկերության կողմից վերոնշյալ ժամանակահատվածում իրացված շաքարավազի միջին մանրամասն գների դինամիկան: Արդյունքում պարզվել է, որ 2018 թվականի հունվարին ընկերության կողմից իրացված շաքարավազի մանրամասն գինը (առանց ԱԱՀ) կազմել է ---- դրամ, իսկ 2020 թվականի մարտին ---- դրամ, այսպիսով նշված ժամանակահատվածում ընկերության կողմից մանրամասն իրացման ոլորտում իրացված շաքարավազի գինը ----- է շուրջ ---%-ով:

Միաժամանակ պարզ է դարձել, որ վերոնշյալ ժամանակահատվածում էականորեն ----- են ընկերության կողմից շաքարավազի ձեռքբերման արժեքները: Մասնավորապես՝ 2018 թվականի հունվարին այն կազմել է --- դրամ, իսկ 2020 թվականի մարտին՝ --- դրամ, այսինքն շաքարավազի ձեռքբերման արժեքը ----- է շուրջ --%-ով:

ՀՀ ՊԵԿ կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության համաձայն «Սաս-Գրուպ» ընկերության տարեկան շրջանառությունը 2019 թվականին կազմել է շուրջ ----- դրամ, իսկ 2019 թվականի ընթացքում ընկերության կողմից իրացված շաքարավազից ստացված հասույթը կազմել է ----- դրամ, այսինքն շուրջ՝ ---%:

Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման, ներկայացված դիրքորոշումների, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և հետազոտման արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է, որ «Սաս-Գրուպ» ընկերությունը որպես առևտրային ցանց ունի գերիշխող դիրք և նրա գործունեության ուսումնասիրության արդյունքում Օրենքի խախտման փաստեր չեն հայտնաբերվել:

6.4. «Նոր Զովք» ընկերության կողմից «Շաքարավազ» ապրանքային շուկայում իրականացված գործունեության մասին.

Վարչական վարույթի շրջանակներում Հանձնաժողովը «Նոր Զովք» ընկերության կողմից «Շաքարավազ» ապրանքային շուկայում իրականացված գործունեությունը վերլուծելու և գնահատելու նպատակով.

1. ուսումնասիրել է դիտարկվող ժամանակահատվածում ընկերության կողմից ձեռքբերված շաքարավազի ծավալները և դրանց ձեռքբերման գները,

2. ուսումնասիրել է դիտարկվող ժամանակահատվածում ընկերության կողմից իրացված շաքարավազի ծավալները՝ մանրածախ իրացման ոլորտում, դրանց ինքնարժեքն ու վաճառքի փաստացի գինը,

3. իրականացրել է համեմատական վերլուծություն՝ ընկերության կողմից իրացված շաքարավազի վաճառքի փաստացի գնի (առանց ԱԱՀ) և ինքնարժեքի միջև՝ հաշվի առնելով ընկերության կողմից կիրառվող՝ պաշարների ինքնարժեքի գնահատման մեթոդը,

4. ուսումնասիրել է ընկերության կողմից իրացվող շաքարավազի ինքնարժեքի կառուցվածքը և գնահատվել այն ձևավորող բաղադրիչների տեսակարար կշիռը ինքնարժեքի կառուցվածքում,

5. ուսումնասիրել և համեմատել է շաքարավազ գնելու գործընթացում մատակարարների կողմից ընկերության նկատմամբ կիրառվող գները,

6. Գնահատել է 2019 թվականի ընթացքում ընկերության կողմից իրացված շաքարավազից ստացված հասույթի տեսակարար կշիռը ընկերության ընդհանուր գործունեությունից ստացված հասույթում:

Այսպիսով, գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման, ներկայացված դիրքորոշումների, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և հետազոտման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները:

ՀՀ ՊԵԿ կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության համաձայն «Նոր Զովք» ընկերության տարեկան շրջանառությունը 2019 թվականին կազմել է շուրջ ----- դրամ: Ընկերության պաշտոնական կայքում (<http://www.norzovq.am/>) գետեղված տեղեկատվության համաձայն՝ «Նոր Զովք» ընկերությանը պատկանում է 18 առևտրային օբյեկտ՝ «Նոր Զովք» ապրանքային նշանի ներքո:

«Նոր Զովք» ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության վերլուծությունից պարզ է դարձել, որ վերջինիս կողմից 2018 թվականի հունվարից մինչև 2020 թվականի մարտը ներառյալ իրացվել է շուրջ ---- կգ շաքարավազ:

Միաժամանակ Հանձնաժողովի կողմից դիտարկվել է «Նոր Զովք» ընկերության կողմից վերոնշյալ ժամանակահատվածում իրացված շաքարավազի միջին մանրածախ գների դինամիկան: Արդյունքում պարզվել է, որ 2018 թվականի հունվարին ընկերության կողմից իրացված շաքարավազի մանրածախ գինը (առանց ԱԱՀ) կազմել է --- դրամ, իսկ 2020 թվականի մարտին ---- դրամ, այսպիսով նշված ժամանակահատվածում ընկերության կողմից մանրածախ իրացման ոլորտում իրացված շաքարավազի գինը ----- է շուրջ --%-ով:

Միաժամանակ պարզ է դարձել, որ վերոնշյալ ժամանակահատվածում էականորեն ----- են ընկերության կողմից շաքարավազի ձեռքբերման արժեքները: Մասնավորապես՝ 2018

թվականի հունվարին այն կազմել է --- դրամ, իսկ 2020 թվականի մարտին՝ --- դրամ, այսինքն շաքարավազի ձեռքբերման արժեքը ----- է շուրջ --%-ով:

ՀՀ ՊԵԿ կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության համաձայն «Նոր Ջուլք» ընկերության տարեկան շրջանառությունը 2019 թվականին կազմել է շուրջ ----- դրամ, իսկ 2019 թվականի ընթացքում ընկերության կողմից իրացված շաքարավազից ստացված հասույթը կազմել է ----- դրամ, այսինքն շուրջ՝ --%:

Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման, ներկայացված դիրքորոշումների, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և հետազոտման արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է, որ «Նոր Ջուլք» ընկերությունը որպես առևտրային ցանց ունի գերիշխող դիրք և նրա գործունեության ուսումնասիրության արդյունքում Օրենքի խախտման փաստեր չեն հայտնաբերվել:

6.5. «Էվրիկա Գրուպ» ընկերության կողմից «Շաքարավազ» ապրանքային շուկայում իրականացված գործունեության մասին.

Վարչական վարույթի շրջանակներում Հանձնաժողովը «Էվրիկա Գրուպ» ընկերության կողմից «Շաքարավազ» ապրանքային շուկայում իրականացված գործունեությունը վերլուծելու և գնահատելու նպատակով.

1. ուսումնասիրել է դիտարկվող ժամանակահատվածում ընկերության կողմից ձեռքբերված շաքարավազի ծավալները և դրանց ձեռքբերման գները,

2. ուսումնասիրել է դիտարկվող ժամանակահատվածում ընկերության կողմից իրացված շաքարավազի ծավալները՝ մանրածախ իրացման ոլորտում, դրանց ինքնարժեքն ու վաճառքի փաստացի գինը,

3. իրականացրել է համեմատական վերլուծություն՝ ընկերության կողմից իրացված շաքարավազի վաճառքի փաստացի գնի (առանց ԱԱՀ) և ինքնարժեքի միջև՝ հաշվի առնելով ընկերության կողմից կիրառվող՝ պաշարների ինքնարժեքի գնահատման մեթոդը,

4. ուսումնասիրել է ընկերության կողմից իրացվող շաքարավազի ինքնարժեքի կառուցվածքը և գնահատվել այն ձևավորող բաղադրիչների տեսակարար կշիռը ինքնարժեքի կառուցվածքում,

5. ուսումնասիրել և համեմատել է շաքարավազ գնելու գործընթացում մատակարարների կողմից ընկերության նկատմամբ կիրառվող գները,

6. Գնահատել է 2019 թվականի ընթացքում ընկերության կողմից իրացված շաքարավազից ստացված հասույթի տեսակարար կշիռը ընկերության ընդհանուր գործունեությունից ստացված հասույթում:

Այսպիսով, գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման, ներկայացված դիրքորոշումների, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և հետազոտման արդյունքում Հանձնաժողովը հաստատված է համարում հետևյալ փաստական հանգամանքները:

ՀՀ ՊԵԿ կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության համաձայն «Էվրիկա Գրուպ» ընկերության տարեկան շրջանառությունը 2019 թվականին կազմել է շուրջ ----- դրամ: «Սփյուռ» տեղեկատվական համակարգում (<http://www.spyur.am/>) գետեղված տեղեկատվության համաձայն՝ «Էվրիկա Գրուպ» ընկերությանը պատկանում է 15 առևտրային օբյեկտ՝ «Էվրիկա Սուպերմարկետ» ապրանքային նշանի ներքո:

«Էվրիկա Գրուպ» ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության վերլուծությունից պարզ է դարձել, որ վերջինիս կողմից 2018 թվականի հունվարից մինչև 2020 թվականի մարտը ներառյալ իրացվել է շուրջ ----- կգ շաքարավազ՝ բացառապես ընկերության պատկանող մանրածախ առևտրային ցանցի միջոցով:

Միաժամանակ Հանձնաժողովի կողմից դիտարկվել է «Էվրիկա Գրուպ» ընկերության կողմից վերոնշյալ ժամանակահատվածում իրացված շաքարավազի միջին մանրածախ գների դինամիկան: Արդյունքում պարզվել է, որ 2018 թվականի հունվարին ընկերության կողմից իրացված շաքարավազի մանրածախ գինը (առանց ԱԱՀ) կազմել է ---- դրամ, իսկ 2020 թվականի մարտին ---- դրամ, այսպիսով նշված ժամանակահատվածում ընկերության կողմից մանրածախ իրացման ոլորտում իրացված շաքարավազի գինը ----- է շուրջ --%-ով:

Միաժամանակ պարզ է դարձել, որ վերոնշյալ ժամանակահատվածում էականորեն ----- են ընկերության կողմից շաքարավազի ձեռքբերման արժեքները: Մասնավորապես՝ 2018 թվականի հունվարին այն կազմել է --- դրամ, իսկ 2020 թվականի մարտին՝ --- դրամ, այսինքն շաքարավազի ձեռքբերման արժեքը ----- է շուրջ --%-ով:

ՀՀ ՊԵԿ կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության համաձայն «Նոր Զովք» ընկերության տարեկան շրջանառությունը 2019 թվականին կազմել է շուրջ ----- դրամ, իսկ 2019 թվականի ընթացքում ընկերության կողմից իրացված շաքարավազից ստացված հասույթը կազմել է ---- դրամ, այսինքն շուրջ՝ --%:

Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման, ներկայացված դիրքորոշումների, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և հետազոտման արդյունքում Հանձնաժողովը եզրահանգում է, որ «Էվրիկա Գրուպ» ընկերությունը որպես առևտրային ցանց ունի գերիշխող դիրք և նրա գործունեության ուսումնասիրության արդյունքում Օրենքի խախտման փաստեր չեն հայտնաբերվել:

Օրենքի 30-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից իրականացվող վարչական վարույթի ընթացքում սույն օրենքի խախտման փաստ չհայտնաբերվելու կամ վարչական ակտի ընդունումն անհնար դարձնող հանգամանքների առկայության դեպքում Հանձնաժողովի որոշմամբ վարույթը կարճվում է:

Ամփոփելով վերոնշյալը և հաշվի առնելով, որ սույն վարչական վարույթի ընթացքում «Ալեքս Էնդ Հոլդինգ», «Արմեն-Համիկ Եղբայրներ Հ/Զ», «Սիթի», «Նոր Զովք», «Էվրիկա Գրուպ», «Մաջիդ Ալ Ֆութաիմ հայփերմարքեթս էյ-էմ», «Սաս-Գրուպ» ընկերությունների գործողություններում Օրենքի 5-րդ և 7-րդ հոդվածներով ամրագրված իրավախախտումների հատկանիշներ չեն հայտնաբերվել, Հանձնաժողովն ամրագրում է, որ այդ ընկերությունների մասով վարչական վարույթը ենթակա է կարճման:

Միաժամանակ Հանձնաժողովն արձանագրել է, որ վարչական վարույթի շրջանակներում Օրենքի 5-րդ հոդվածով ամրագրված իրավախախտման հատկանիշներ չեն հայտնաբերվել նաև «Ալեքս Հոլդինգ» ընկերության գործողություններում:

Ելնելով վերոնշյալից և հիմք ընդունելով Օրենքի 1-ին, 6-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը և 5-րդ մասի 1-ին կետը, 7-րդ հոդվածի 1-ին մասը և 2-րդ մասի «ա», «դ» և «ը» կետերը, 19-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «գ» կետերը, 30-րդ հոդվածի 8-րդ և 11-րդ մասերը, 30-րդ հոդվածի 12-րդ մասը, 31-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 34-րդ հոդվածը, 35-րդ հոդվածը, 36-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հաստատված համարել 2018 թվականի հունվարից մինչև 2020 թվականի մարտ ամիսն ընկած ժամանակահատվածում «Շաքարավազ» ապրանքային շուկայում «Ալեքս Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գերիշխող դիրքի առկայությունը:

2. «Ալեքս Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործողությունները՝ իրացման չհիմնավորված, խտրական գների սահմանումը կամ կիրառումը, այլ տնտեսվարող սուբյեկտների կամ սպառողների նկատմամբ խտրական պայմանների (այդ

թվում՝ գների) սահմանումը կամ կիրառումն այլ հավասար պայմաններում, ապրանքի գնի չհիմնավորված իջեցումը, այլ պայմանների կամ վարքագծի սահմանումը կամ կիրառումը, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել տնտեսական մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը՝ որակել որպես գերիշխող դիրքի չարաշահում՝ Օրենքի խախտում:

3. Սույն որոշման 2-րդ կետով նշված Օրենքի խախտման համար «Ալեքս Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ նշանակել տուգանք՝ 2019 թվականի հասույթի -----%-ի՝ 24 780 000 (քսանչորս միլիոն յոթ հարյուր ութսուն հազար) դրամի չափով:

4. Հանձնարարել «Ալեքս Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝

- 1) սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո 1-ամսյա ժամկետում վերացնել Օրենքի խախտումը՝ շաքարավազի իրացման պայմանները և գնային քաղաքականությունը համապատասխանեցնել Օրենքին՝ սահմանելով նաև շաքարավազի իրացման հստակ, օբյեկտիվ և ոչ խտրական պայմաներ,
- 2) սույն որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետի պահանջը կատարելուց հետո 5-օրյա ժամկետում տեղեկացնել Հանձնաժողովին,
- 3) սույն որոշման 3-րդ կետով սահմանված տուգանքը վճարել մինչև որոշման անբողոքարկելի դառնալը,
- 4) հետագայում բացառել Օրենքի խախտումը:

5. Կարճել «Ալեքս Էնդ Հոլդինգ», «Արմեն-Համիկ Եղբայրներ Հ/Ձ», «Սիթի», «Նոր Զովք», «Էվրիկա Գրուպ», «Մաջիդ Ալ Ֆութաիմ հայփերմարքեթս էյ-էմ» և «Սաս-Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասով վարչական վարույթը:

6. Սույն որոշումը համապատասխանաբար ուժի մեջ է մտնում դրա պատճենը «Ալեքս Հոլդինգ», «Ալեքս Էնդ Հոլդինգ», «Արմեն-Համիկ Եղբայրներ Հ/Ձ», «Սիթի», «Նոր Զովք», «Էվրիկա Գրուպ», «Մաջիդ Ալ Ֆութաիմ հայփերմարքեթս էյ-էմ» և «Սաս-Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին հանձնելուն հաջորդող օրվանից:

7. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ ուժի մեջ մտնելու պահից 10-օրյա ժամկետում: Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ վարչական բողոքի քննարկման արդյունքներին համաձայն չլինելու դեպքում՝ բողոքի վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում, իսկ վարչական բողոք չբերելու դեպքում՝ ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

8. Սույն որոշման բողոքարկումը չի կասեցնում դրա գործողությունը (կատարումը):

ՆԱԽԱԳԱՀ՝

ԳԵՂԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ